



Ստյոպա Ռոբերտի Զաքինյանը ծնվել է 1976 թվականի դեկտեմբերի 5-ին Տավուշի մարզի Բերդ քաղաքում:

1998 թ.-ին գերազանցությամբ ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի «Ընդհանուր տնտեսագիտություն» ֆակուլտետը, ստացել է դիպլոմ «Համաշխարհային էկոնոմիկա» մասնագիտությամբ: 2007 թ.-ին, նույն ուսումնական հաստատությունում պաշտպանելով թեկնածուական ատենախոսությունը, ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

1998-1999 թթ.-ին Ստյոպա Զաքինյանը ծառայել է ՀՀ զինված ուժերում:

Ստյոպա Զաքինյանը 2005 թ.-ի հունվարից մայիս ամիսներին անկախ հետազոտական աշխատանքներ է կատարել Բոստոնի Դաշնային Պահուստային Բանկում՝ բանկային իրացվելիության կառավարման թեմայով:

Մասնակցել է նաև մի շարք մասնագիտական դասընթացների, այդ թվում՝ EBRD-ի “Retail Banking Workshop” և “International Trade and Finance“, IFC-ի “Liquidity Risk Training“, իռլանդական IDI Ltd.-ի “Strategy & Management in Banking Program“ թեմաներով դասընթացներին:

2015 թ.-ի փետրվարին նա ստացել է ACI դիվիզիոնի քննության գերազանցության վկայական:

Համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ստացված վկայականների՝ Ստյոպա Զաքինյանն ունի ամապատասխան որակավորումներ զբաղեցնելու մի շարք պաշտոններ, այդ թվում՝

- Բանկի գործադիր տնօրեն, գործադիր տնօրենի տեղակալ, տնօրինության անդամ,
- Օտարերկրյա բանկի մասնաճյուղի կառավարիչ,
- Ներդրումային ընկերության և օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գործադիր մարմնի ղեկավար և անդամ,
- Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ներդրումային ծառայությունների մատուցման համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավար:

2023 թ.- ին Ստյոպա Զաքինյանը ստացել է Լոնդոնի Բիզնես Դպրոցի (LBS) գործարար կառավարման մագիստրոսի աստիճան (MBA):

Ստյոպա Զաքինյանն իր աշխատանքային գործունեությունը սկսել է 2000 թ.-ի հուլիսի 6-ից՝ աշխատելով «ՀԱՅԳՅՈՒՂՓՈՒՄԲԱՆԿ» կոոպերատիվի, ներկայիս «Ակբա բանկ» ԲԲԸ, «Արմավիր» մասնաճյուղում որպես վարկային գործակալ:

Այնուհետև 2002 թ.-ի փետրվարի 6-ից 2003 թ.-ի հունիսի 2-ը աշխատել է նույն բանկի «Շիրակ» մասնաճյուղում:

2003 թ.-ի հունիսի 2-ին տեղափոխվել է ՀԱՅԳՅՈՒՂՓՈՒՄԲԱՆԿ» կոոպերատիվի կենտրոնական



գրասենյակ՝ որպես մեթոդաբանության, վերլուծությունների և ստրատեգիական պլանավորման գծով մասնագետ:

2005 թ.-ի հունիսի 1-ին նշանակվել է Ստրատեգիական պլանավորման, վերլուծությունների և ակտիվների ու պասիվների կառավարման (2008 թ.-ից Ակտիվների ու Պասիվների կառավարման և վերլուծությունների) բաժնի պետ:

2010 թ.-ի հունվարի 1-ից մինչև 2014 թ.-ի հունվարի 1-ը ղեկավարել է Ակտիվների և պասիվների կառավարման և դիվիզի վարչությունը, իսկ 2014 թ.-ի հունվարի 1-ից մինչև 2015 թ.-ի հուլիսի 27-ը՝ Միջազգային հարաբերությունների և ակտիվների ու պասիվների կառավարման վարչությունը:

2015 թ.-ի հուլիսի 27-ից Ստյոպա Ջաքինյանը նշանակվել է Ֆինանսական գծով տնօրեն/ Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ:

Ամուսնացած է, ունի երկու որդի և երկու դուստր: